

**Ավարտվեց <<Բազե-2015>> համահայկական երիտասարդական հավաքի
Սյունիքի մարզային ջոկատի ընտրական փուլը**
18.07.2015թ.

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Սյունիքի մարզային կենտրոնի ներկայացուցիչները և <<Բազե>> համահայկական երիտասարդական հավաքի նարնջագույն ճակատի կազմակերպիչները ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի մշակույթի և սպորտի բաժնի հետ համատեղ, Կապանի մշակույթի կենտրոնում անցկացրեցին <<Բազե-2015>> համահայկական երիտասարդական հավաքի Սյունիքի ջոկատի ընտրական փուլի միջոցառումները:

Մարզի տարբեր համայնքներից մարզկենտրոն ժամանած 25 երիտասարդներից մրցութային կարգով ձևավորվեց 9 հոգանոց Սյունիքի ջոկատը, ովքեր կմասնակցեն օգոստոսի 17-23-ը Ծաղկաձորում կայանալիք ամենամյա <<Բազե>> համահայկական երիտասարդական հավաքի միջճակատային մրցույթներին: Կներկայացվեն 8 մարզաձևեր՝ սեղանի թենիս, շախմատ, սպորտլանդիա, վոլեյբոլ, ձեռքի ուժ, մինի ֆուտբոլ, ազգային սպորտախաղեր և լող, ինչպես նաև մշակութային ու ինտելեկտուալ որակավորումներ՝ երգ, պար, նորաձևություն, նկարչություն: Ջոկատի ղեկավար ընտրվեց վոլեյբոլի ազգային հավաքականի սիսիանցի խաղացող Սմբատ Գևորգյանը:



